# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 264-րդ հոդվածի 3-րդ մասում «ինչպես նաև 47» բառերը փոխարինել «ինչպես նաև 46» բառերով։

**Հոդված 2.** Օրենսգրքի 349-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Նախագահողը կնքում է դատավճռի յուրաքանչյուր էջը և ստորագրում է դատավճռի եզրափակիչ մասը։»։

**Հոդված 3.** Օրենսգրքի 350-րդ հոդվածի 6-րդ մասում «ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում,» բառերով։

**Հոդված 4.** Օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ և նշանակում դատաքննության՝ որոշման մեջ նշելով այն գրավոր, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված միջնորդությունը բավարարելու դեպքում՝ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին։

**Հոդված 5.** Օրենսգրքի 368-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ուսումնասիրված քրեական գործը բանավոր ընթացակարգով դատաքննության նշանակելու մասին որոշմամբ .

1) սահմանվում է դատական նիստի վայրը, տարին, ամիսը, օրը, ժամը.

2) ապացույցներ հետազոտելու անհրաժեշտության դեպքում սահմանվում են դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, ցուցմունք տալու համար դատարան հրավիրվող անձանց ցանկը.

3) լուծվում է խափանման միջոցի հարցը.

4) լուծվում է դատական նիստը դռնբաց կամ դռնփակ անցկացնելու հարցը։».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1. Ուսումնասիրված քրեական գործը գրավոր ընթացակարգով դատաքննության նշանակելու մասին որոշմամբ .

1) սահմանվում է դատական ակտի կայացման օրը.

2) սահմանվում է վարույթի մասնակիցների կողմից միջնորդությունների և բացատրությունների ներկայացման վերջնաժամկետը.

3) լուծվում է խափանման միջոցի հարցը։»։

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննությունը բանավոր ընթացակարգով իրականացվելու դեպքում առաջին դատական նիստը նշանակվում է քրեական գործն ստանալու օրվանից հետո՝ քսան օրվա, սակայն ոչ ուշ, քան առաջին վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում։»։

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.

«3.1.Գրավոր ընթացակարգով իրականացվող վերաքննությունը բանավոր ընթացակարգով փոխակերպելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ առաջին դատական նիստը նշանակվում է որոշում կայացնելուց հետո՝ քսան օրվա ընթացքում։»։

**Հոդված 6.**Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Դատարանի որոշմամբ բանավոր ընթացակարգով դատաքննությանը կարող է պարտադիր համարվել բողոքը ներկայացրած անձի, վարույթի մյուս մասնակիցների, այդ թվում՝ դատախազի մասնակցությունը»։

**Հոդված 7.** Օրենսգիրքի 370-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակության նոր 2.1 մասով.

«2.1. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում։»։

**Հոդված 8.** Օրենսգրքի 379-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հրապարակումից» բառը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից» բառերով.

2) 2-րդ մասում «հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից հետո՝ ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում,»։

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։